ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

«Արարատ» ամսագրի յարգելի խմբագրութեան

Ալմաւիրցի մեծարգոյ պ. պ. Աղէքսանդր, Գաբրիէլ և Միքայէլ Թորոսեան եղբայրները նուիրաբերել են Մայր Տաճարին ժամաշապկացու սպիտակ քաթան 560 արշին, կանաչ քոպայացու կտորով, որոնցից պատրաստուեցին 77 ժամաշապիկներ։

Թորոսեան եղբայրների այդ նուէրի մասին զեկուցանելով Վեհափառ Հայրապետին, Նորին Սրբութիւնը բարեհաճեց օրհնել յարգելի նուիրատուներին։

Այս մասին խնդրում եմ հրատարակել «Արարատի» մերձակայ համարում։

Մայր Տաճարի Լուսարարապետ՝ Ղեւոնդ եպիսկոպոս

Ս. Էջմիածնի Գ. Հոգեւոր Ճեմարանի տեսչի օգնական

Պ. ՄԵՆՏՈՐ ՌՈՍՏՈՄԵԱՆԻՆ

Երկրորդ պատասխան.

Արարատի յունիսի և (յուլիսի) համարը միայն երեք օր առաջ ձեռքս հասաւ։ Ռոստոմեանը կրկին հանդէս է եկել. և չհերքելով իմ ա. պատասխանում բերած փաստերը, իւր յիշողութեանն ապաւինելով՝ յայտնում է, որ ես նորան ճեմարանի տարեդարձից՝ սեպտեմբերի 27-ից յետոյ միայն կարող եմ խնդրած լինել մատենադարանի դրքերն ստուգել։

Բայց չէ՞ որ, ինչպէս ա. պատասխանումս ասել եմ, ես դեռ երեք տարի առաջ մատենադարանապետութիւնն ստանձնելով՝ ձեր նախորդից եմ խնդրել միևնոյն բանը, ի՞նչ ունէի ձեզանից ծածկելու մինչև սեպտեմբեր։ Սակայն այստեղ էականը այս չէ, այլ այն, որ ես և ձեր ժամանակ մատենադարանն ստացել եմ առանց հաշուի և ստուգութեան։ Ձեր այս բ. նամակով «11